

րաւ արդէն գոյութիւն ունեցող դպրոցաց բարեզարդ կարգաւորութեան, Իւսկիւտարի դպրոցն վերստին նորոգեց: Նոյնպէս շատ փոյթ կը տանէր ազգիս մէջ օգտակար եւ ուսումնական գրքեր տարածելու¹. քանի՜ քանի մատենաներ իւր դրամովն սկսան հրապարակելը. բաց ասկէ՝ ազգին յառաջագիմութիւնն դիւրացընելու նպատակաւ՝ Արշարունեաց ընկերութիւնն հաստատեց, որուն ծախիւքն ամսաթերթ մըն ալ հրատարակել կու տար, այն է Գիտակ Բեղանդեան²:

Այնպիսի գիւրաւ երեւակայութիւլ, որ այսպիսի կրօնասէր, ուսումնասէր եւ ազգասէր հօր մը շառաւիղներն՝ իրենց հօր հետ մրցէին այս երեք յատկութեանց մէջ: Ասոնց մէջ անուանի էր ու-

¹ Իւր ուսումնասիրութեան եռանդը ցուցընելու համար յառաջ կը բերենք յիշեալ ընկերութեան առջեւ իւր խօսած ճառէն մաս մը՝ «... Զանաւոր մենք միաբանեալքս այսու հետեւ զմեզ փոխել, որ մեր օրինակովը ազգնալ կարողանանք փոխելու. մենք նախ ըլլանք ազգասէր որ ազգնալ ըլլայ ազգասէր: ... Ու նախ եւ առաջ մենքալ (թէպէտեւ ատեննիս անցած է) ամա կարելութեան շափ սորվինք, հիւ որ չէ՝ ուսում ու ուսումնականաց սիրող ըլլանք. ու ասոր պակաս մնացածը՝ մեր զաւկներուն ուսում սորվցնել տալով՝ լեցընենք. մեր զաւկներուն վրայ ստակ խարճելը պօշ պարապ բան չիսեպենք. մեր աւելորդ գէֆք սէֆայէն, հաւախլ կապվիլէն ստակը կտրենք, անոնց վարպետները՝ որ օրն ի բուն կեանքերնին զաւկներնուս վրայ կը մաշէն, խօշնուտ ընենք, առատաբար հոգանք: ... Ու աս մեր ընկերութեան անուննալ գըրինք Արշարունեաց ընկերութեան: ... Առջի միտքը մեր ընկերութեան է՝ մեր խարճովը մեր ստակովը տպագրել տալ ան ամէն գրեանքը մեր երախտաւոր նախնեաց՝ որ մինչեւ հիմայ մնացած են: ... Երկրորդ միտքը աս ընկերութեանս է, որ ինչպէն հիմայ եղած ուսումնական գրքերու եւ այլ նորանոր դիրքեր: ... տպագրել տանք: ... Հիմկու հիմայ ասոր սկսուածը օգնեցինք ընել տալ աս Գիտակութիւն: ... Ե. Տ. Գիտակ Բեղանդեան, 1813, Թ. 1.

² Տես Պատմութիւն հայ լրագրութեան, Հանդէս Աշխատի, 1887 էջ, 90, 118: